№ 145 Օգոստոսի 11 Չորեքշաբթի 1882 Օգոստոսի 11 Չորեքշաբթի № 145

ՏԱՍՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

# ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
*Тифлисъ. Редакція «Мшакъ»*

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ Մոսկվայից։ Նամակ Ալէքսանդրապոլից։ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Թիւրքիա։—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ։—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Նամակ Ախալքալաքից։

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՆԱՄԱԿ ՄՈՍԿՎԱՅԻՑ

—

Յուլիսի 30-ին

Մոսկվայի աշխարհանդէսն այցելելու բաղձն ունենալով, կամենում եմ «Մշակի» յարգելի ընթերցողաց մի երկու տեղեկութիւններ հաղորդել նրա մասին։

Կանխապէս ներողութիւն խնդրելով, ես հրաժարվում եմ նրա մանրամասն նկարագրութիւնից, քանի որ դա իմ գրչի ուժից վեր է և մանաւանդ՝ որ ես այդ հանդէսը միայն երեք օր այցելելու յաջողութիւն ունեցայ, մինչդեռ կարդին զննելու և հարկաւոր ու հետաքրքիր տեղեկութիւններ քաղելու համար ոչ միայն երեք օր, այլ և երեք շաբաթ ես քիչ եմ համարում։

Մոսկվայի աշխարհանդէսը գտնվում է քաղաքի արևմտեան ծայրի «Պետրովսկի պարկ» կոչված տեղի ձախ կողմը, բաղկացած է 80 մեծ և փոքր շինութիւններից, բռնելով մօտ 57,600 քառակուսի սաժէն տարածութիւն. ունի եօթն մուտք։ Իրեղէնները իրանց տեսակի համեմատ բաժանված են 14 գրուպպաների, որոնցից առաջինն է ճարտարապետական, նկարչական և լուսանկարչական պատկերների ժողովածուն։ Սա զետեղված է վից սենեակներում, որոնց մէջտեղինը մի բաւական մեծ և չքեղ դահլիճ է։ Այստեղ կախած են երևելի նկարիչների ամենաընտիր գործերը, դոցա թւում և մեր հայազգի պ. Ց. Կ. Այվազովսկու հեսնեալ ութ նշանաւոր աշխատութիւնները. 1) Ակնածութիւն Սև ծովի ափերում, 2) Համաշխարհային ջրհեղեղ. 3) Ղարսի առնումն. 4) Ալէքսանդր II կայսեր Դունայ գետից անցնելը. 5) Վոլգա գետը. 6) Սև ծովը. 7) Առաւօտ Նէապոլում և 8) Ուիմպի տեսքը։ Սոքա իրանց քնքոյշ նուրբ գոյներով ու գծագրութիւններով առաջին փայլն են տալիս այն դահլիճին և հէնց չատ ռուսների խոստովանվելով այս պատկերները հանդիսի առաջինների կարգումն են։ Այս տեսարանը մի առանձին ուրախութեամբ լցրեց սիրտս և ես երկար ժամանակ արդէն հասարակութեան հանգստութեան համար դարսած աթոռների վրա նստած ապշած դիտում էի. միայն ցաւալի է որ պ. Այվազովսկին, իբրև հայ, զլացել է հայկական կեանքից կամ Հայաստանից որ և է նիւթ վերցնել իր նկարչութիւնների համար։

Ցետոյ սրան հետևում էր ուսումնական շրջանը, որը ես բաւական ուրախալի էր մեզ համար։ Այնտեղ կային Լազարեան ճեմարանի աշակերտների ձեռագիրներ, նկարներ, թարգմանութիւններ և հեղինակութիւններ, նոյնպէս և պ. պ. Լիմնի, Պատկանեանի աշխատութիւններից մի քանի գրեանք փառաւոր կազմած. նոյնպէս կար և ալէբաստրից ձուլած Երուսաղէմի տեսքը, որի բացատրութեան համար նշանակված էր մի պարոն, որը ժամաղդաբար իմ ժամանակս բացակայ էր այնտեղից։

Այստեղից էլ անցանք և աչքներիս ընկաւ Թիֆլիսի, Քութայիսի, Երևանի և Բագուի կլասիկական և ռէալական դպրոցների աշակերտների գեղագրութիւններ, գծագրութիւններ և զանազան նկարչութիւններ, որոնք շատ յաջողութեամբ գործած էին. շատ հաճելի էր ինձ այդ նկարներից չատերի տակ հայկական անուններ և ազգանուններ տեսնել, սակայն չեմ կարող չը յայտնել և իմ խորին ցաւակցութիւնս որ յատուկ մեր հայկական դպրոցների կողմից ոչինչ չը կար հանդիսում։ Ինչ մեծ աշխատութիւն էր հարկաւոր արդեօք, եթէ մեր ուսումնարանաց վարչութիւնները, օրինակ Ներսիսեան դպրոցի, Անանեան և Գայանեան օր. վարժարանների աշակերտների և աշակերտուհիների հէնց ձեռագրներից, զանազան նկարչութիւններից և այլ աշխատութիւններից, նոյնպէս և ձեռագործներից մի ժողովածու ուղարկէին այդ հանդէսը, ցոյց տային այնտեղ, ուր չատ օտարազգի երևելի այցելուներ էլ են գալիս, որ հայն էլ քաղաքակրթութեան ասպարիզում գործում է և կարող է ժամանակով նոցա հետ համահաւասար ձիրքերով ազդ դառնալ։ Եթէ հասարակ ժողովուրդը չէ կարողանում հանդիսի օգտաւէտութիւնը ճանաչել, մթթէ մեր տեսուչներն էլ չը գիտեն դրա չահը։ Երևակայեցէք ձեզ հէնց մի աչակերտ, որի մի աշխատութիւնը ուղարկվում է այդպիսի մի հիմնարկութիւն, տեսէք որչափ աւելի աշխոյժ, եռանդ կը ստանար նա իր ձիրքերը կատարելագործելու. իսկ միւս ընկերն էլ այդ պատուին հասնելու համար չէր խնայի ոչինչ ճիգ։ Ժամանակ է արդէն այդպիսի միջոցներից ևս օգուտ քաղելու։

Մեր Կովկասի վաճառականները իրանց առևտրական շրջանը ընդարձակելու համար գոնէ պէտք է իրանց արդիւնաբերութիւններից ուղարկէին այդ հանդէսը. ես այստեղ չատերին կարող եմ մատնացոյց անել, որոնք ուրիշից անգամ ապրանք առնելով, տարած են հանդէսը։ Այստեղ կային և Հին-Նախիջևանի ոսկի և արծաթեայ արհեստագործած իրեղէններ, որոնք մեծ գներով ծախվում էին. մթթէ մեր Թիֆլիսի ոսկերիչը քիչ գեղեցիկ և հիացուցիչ բաներ կարող էր ուղարկել, որոնք բացի չատերի համարումն գրաւելուց (առաւելապէս արտասահմանի մարդկանց) կը ծախվէին և եռապատիկ անգամ գնով։

Թիֆլիսում ունինք 11 թամբաքուի գործարաններ, բայց ոչ մէկը մի ֆունտ թամբաքու չունէր ուղարկված այստեղ. կարծես դոքա աշխարհ են եկած միայն մէկ մէկու ոտի տակը քանդելու, մուշտարին փախցնելու և ամենայն ներելի թէ աններելի միջոցներով իրանց ապրանքը վաճառելու։ Իսկ ազնիւ վաճառականութեամբ, բառի բուն նշանակութեամբ, իրանց վաճառականութեան շրջանի ասպարէզը ընդարձակելու համար չնչին կոպէկն անգամ կը խնայեն։

Հայերի մէջ բացառութիւն է կազմում Ասմօլով և ընկ. գործարանը, որ ազնիւ միջոցներով, տոկուն աշխատանքով այնքան առաջացել է և որի 25 ամեայ տարեդարձը այսօր հանդիսով են տօնում։ Զարմանում եմ թէ «Եղբարք Սալի-Օղլի» գործարանը, որը ամբողջ ութ տարի Նիժնի-Նովգորոդի տօնավաճառում առուտուր ունենալով միշտ քաջպէս մաքառել է Ռուսաստանի գործարանների հետ և յայտնի անուն է վաստակել, այժմս էլ ոչ պակաս արիութեամբ չարունակում է իր գործունէութիւնը, նա ևս ինչի զլացել է իր գործարանի արտադրութիւնից ուղարկել այդ հանդէսը, մինչդեռ Ռուսաստանի յետընկած քունջերի խեղճ գործարաններն անդամ, մեծ զոհողութիւններով, դարձեալ ապրանք են բերած այստեղ։

Անցնելով միւս կողմերը, ոտս ընկաւ միքենաների բաժինը, ուր իմ աւելի ուշս գրաւեց պապիրոս չինող չոքեմքենան. նա այնքան մեծ չէ, ընդամենն $1\frac{1}{2}$—2 կուբիկական արշին տեղ է բռնում։ Կոտորած թամբաքուն ածում են փայտէ խողովակի մէջ, իսկ պապիրոսի և մունչտուկի թուղթը յայտնի լայնութեամբ ժապաւէնի նման կտրած պատատած է առանձին առանձին վալոկներով. մեքենան շոգիով սկսում է շարժվել և ես անձամբ համարեցի ինչպէս մի բոպէում 35 հատ պապիրոս էր պատրաստում, ուրեմն մի ժամում առաւել քան 2,000 հատ։ Պապիրոսները գործում է իստակ, գեղեցիկ և հէնց այնտեղ մաքսադրոշ (бандероль) է պատատվում և ծախվում։

Ոչ պակաս ուշադրութեան արժանի են և վերջին կատարելագործած սիստեմի երկրագործական գործիքները։ Ճանապարհին ես չատ տեղեր տեսայ ինչպէս զոցանով առաս մուժիկը ամենայն յաջողութեամբ և առանց մեծ աշխատանաց երկիրը մշակում, հերքում, ցանում, հնձում և այլն։ Ցանկալի կը լինէր որ մեր նիւթականապէս ապահովված և չատ անգամ Ռուսաստան այցելող գիւղացիները ուշ դարձնէին այդ գործիքների օգտաւէտութեան վրա, բերել տալով և գիւղերում գործածելով ընտելացնէին և միւսներին։ Գները բաւական ձեռնհաս են։

Կովկասեան և Թուրքեստանի բաժնում Շուշու չերամը, լեզգիների չալերը և Կախեթի գինին չքեղապէս դարսած, հեռու ռուսաստանցու հիացումն են գրաւում. իսկ մի քանի երկրագործական գործիքներ, իսկականից չատ փոքր և անտաշ կերպով չինած, Կովկասը ծաղրելու դերն են կատարում։ Նոքա աւելի նման են երեխայի չինած խաղալիքներին, քան այն իրերի, որոնց անունն են կրում։ Եթէ ուղարկվում է, ինչու արդեօք թէ նրան ստիպել են ստորագրելու և այլն։

Ինչքան ուզում էք ասացէք որ չին. ժողովը օրինաւոր լինելու համար, հարկաւոր է տանտէրերի, օրէնքով որոշված մի թիւ, այդ նրանց ականջը չէ մտնում և ցաւալին այն է որ վերոյիշեալի նման դէպքերից չեն ուզում խրատվել։

Ցանուտէրերին տուած իրաւունքները չատ ընդարձակ են. ամենափոքր յանցանքի համար նրանք իրաւունք ունեն բանտարկել մինչ երեք օր կամ տուգանք պահանջել մինչ մի բուբլի։ Բայց ափսոս որ նրանք իրանց տգիտութեան պատճառով չեն օգտվում այդ իրաւունքներից, այլ իւրաքանչիւր չնչին բանի համար դիմում են դաւառական վարչութեանը և սրանից կարգադրութիւն խնդրում։

Շատ տեղերում սրանց և չին. դատաւորների մէջ բացարձակ ատելութիւն է տիրում։

Զը նայելով որ սրանց երկու կողմերի էլ իրաւունքները և գործողութեան չափը պարզապէս որոշված են, դատաւորները հասարակական բոլոր իրաւունքները իրանց անձնաւորութեան մէջ կենտրոնացած կարծելով, խառնվում են ամեն գործի մէջ, իսկ տանուտէրերն էլ իրանց կողմից խառնվում են միայն դատաւորների քննութեանը ենթակայ գործերի մէջ և ահա այդպիսով ծագած անրաւականութեան պատճառաւ, երկու կողմն էլ միմեանց վրա մշտապէս դանգատվում են և զրպարտութիւններ բարդում,

Գիւղերի տները որոշեալ յատակագիծ չունեն, այլ չինվում են խառն ի խառն, ինչպէս պատահի։

Դրանց չինութեան միջոցին չատ անգամ հարևանների կողմից այդ տեղի վերաբերութեամբ պահանջներ են սկսում և այդ պատճառաւ բացբեռնապէս երկրորդ գերդաստանը իր մէջ աւելի անդամներ է պարունակում քան առաջինը։

Այդ անհաւասարութեան, այդ անկանոնութեան ուղղելու միջոցն է՝ հողը բաժանել ընտանիքում գտնված արական անդամների թւի համեմատ, ինչպէս այդ գործադրվում է ի միջի այլոց և դաւառիս «ղուխօրօրներ» անուանված ռուս տաղանդաւորների մէջ։

Այդ պատճառաւ գիւղական ժողովուրդը բաժանված է երկու կուսակցութիւնների, որոնցից մինը, հարուստ դասակարգը, որի ձեռին են գիւղային հողերի մեծ քանակութիւնը և որը օգուտ ունի գործերի հին դրութիւնը չը փոփոխելու—կամենում է ձեռից չը փախցնել ունեցած հողը, իսկ միւսը կամենում է հողը բաժանել ընտանիքում գտնված արական անդամոց հաշուով։

Գիւղացիներին տրուած կանոնադրութեան մէջ, նրանց տրուած է իրաւունք վճռել իրանց միջի հողային վէճերը, եթէ չեմ սխալվում, բնակչաց ընդհանուր թւի $^2/_3$ մասի համաձայնութեամբ։

Այդպէս էլ պէտք է վարվէին գիւղացիք, բայց նրանք օգուտ չը քաղելով իրանց իրաւունքից, անտեղի խնդիրքներով տաղտկացնում են բարձրագոյն իշխանութեանը, որը իբրև պատասխան նրանց խնդիրքներին, մատնացոյց է անում վերոյիշեալ կանոնադրութեան յօդուածը։ Ունենալ իրաւունք մի գործ վճռելու և դէս ու դէն ընկնել, գիւղ ու քաղաք չափել, խնդիրներ գրելու և այլն ծախսեր անել, դա ապացուցանում է գիւղացու տգիտութիւնը։

Բայց ոչ միայն այդ հարցի մէջ, այլ ինքնավարչութեան բոլոր գործոց մէջ գիւղացին օգուտ չէ քաղում, չէ հետևում իրան տուած կանոնադրութեան մէջ յիշուած օրէնքներին։

Նա իրաւունք ունի չինական ժողովով վճռել թէ ընտանեկան բաժանման, թէ հողային և թէ այլ հասարակական վէճեր, բայց ափսոս որ չին. ժողովի կազմակերպութեան մասին նա հասկացողութիւն չունէ։

Դիցուք թէ Կիրակոսը Մատիրոսի հետ անբաւականութիւն ունի, Կիրակոսը վեր է առնում մի թերթ թուղթ, վերնագիրը հասարակութեան անունից մինին գրել է տալիս, և սկսում է արնից տուն ման ածել (չատ անգամ գիշերները), սրան նրան խնդրել, աղաչել որ ստորագրի։ Գտանում են և այնպիսի դէպքեր, որ մինը վեր է առնում և մի քանի ազդրագէտ անձանց փոխարէն ստորագրում է, թէև դրանք ոչ տեսել են այդ թուղթը, ոչ իմացել նրա միտքը և ոչ խնդրել են իրանց փոխարէն ստորագրել։ Երբ որ այդպիսի ապօրինի կերպով թերթը ստորագրութիւններով ծածկվում է, դրան ներկայացնում են չինական տանուտէրին, ստորագրութիւնները վաւերացնելու։

Իսկ այս վերջինը բոլորովին չէ էլ մտածում հրաւիրել մի առ մի բոլոր ստորագրողներին, տեղեկանալ կողմված թղթի ճշդութիւնը ու ապա վաւերացնել։ Եւ ահա հակառակորդ կողմը իր կողմից խնդիրք է ներկայացնում և բացատրում է թէ այդ թուղթը կազմվել է ոչ թէ չին. ժողովի մէջ—ինչպէս նորանում յիշված է—այլ բոլորովին ապօրինի կերպով։ Նշանակվում է քննութիւն. Ատառած իմ! ինչ խայտառակութիւն է ներկայանում մինը ասում է որ նորա ստորագրութիւնը կեղծել են, միւսը թէ առանց նրան իմաց տալու գրծի էութիւնը ստորագրել են, երրորդը թէ նրան ստիպել են ստորագրելու և այլն։

Ինչքան ուզում էք ասացէք որ չին. ժողովը օրինաւոր լինելու համար, հարկաւոր է տանտէրերի, օրէնքով որոշված մի թիւ, այդ նրանց ականջը չէ մտնում և ցաւալին այն է որ վերոյիշեալի նման դէպքերից չեն ուզում խրատվել։

Տանուտէրերին տուած իրաւունքները չատ ընդարձակ են. ամենափոքր յանցանքի համար նրանք իրաւունք ունեն բանտարկել մինչ երեք օր կամ տուգանք պահանջել մինչ մի բուբլի։ Բայց ափսոս որ նրանք իրանց տգիտութեան պատճառով չեն օգտվում այդ իրաւունքներից, այլ իւրաքանչիւր չնչին բանի համար դիմում են դաւառական վարչութեանը և սրանից կարգադրութիւն խնդրում։

Շատ տեղերում սրանց և չին. դատաւորների մէջ բացարձակ ատելութիւն է տիրում։

Զը նայելով որ սրանց երկու կողմերի էլ իրաւունքները և գործողութեան չափը պարզապէս որոշված են, դատաւորները հասարակական բոլոր իրաւունքները իրանց անձնաւորութեան մէջ կենտրոնացած կարծելով, խառնվում են ամեն գործի մէջ, իսկ տանուտէրերն էլ իրանց կողմից խառնվում են միայն դատաւորների քննութեանը ենթակայ գործերի մէջ և ահա այդպիսով ծագած անրաւականութեան պատճառաւ, երկու կողմն էլ միմեանց վրա մշտապէս դանգատվում են և զրպարտութիւններ բարդում,

Գիւղերի տները որոշեալ յատակագիծ չունեն, այլ չինվում են խառն ի խառն, ինչպէս պատահի։

Դրանց չինութեան միջոցին չատ անգամ հարևանների կողմից այդ տեղի վերաբերութեամբ պահանջներ են սկսում և այդ պատճառաւ բաց-

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ՆԱՄԱԿ ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ

—

Օգոստոսի 1-ին

Գիւղական ազգաբնակութիւնը, երկրագործ դասը՝ երկար ժամանակ մոռացութեան է տուած եղել մեզանում, նրա կեանքը չատ քչերին է հետաքրքրել, նրա մասին չատ քիչ են գրել։ Նորերումս միայն, ժողովրդի այդ դասակարգի վրա սկսում են ուշադրութիւն դարձնել, հետազօտել դորա կեանքի մէջ պատահած երևոյթները։

Այդ երևոյթները բազմաթիւ են և հետազօտող անձի համար առատ նիւթ են մատակարարում։

Գիւղական կեանքի մէջ նշմարվող երևոյթների ինչպէս և ինչից յառաջանալու հետազօտութեան մանրամասնութիւնը այլոց թողնելով, իբրև շարունակութիւն «Մշակի» 39 համարում տպված նամակիս, ես կը գրեմ գիւղական ժողովրդի կեանքում իմ նկատած մի քանի կէտերի վերաբերութեամբ։

Գաւառիս գիւղականների մէջ, Ներկայումս օրուայ խնդիրը հողային հարցն է։ Մեր գիւղացին մինչև յայժմ խառնիխուռն և անկանոն կերպով է բաժանել իր մէջ, իր գիւղի հողերը։

Այդ անկանոն բաժանմունքից յառաջանում է այն, որ մինը մինչև անգամ աւելորդով հող ունի, իսկ միւսը այնքան քիչ ունի, որ հազիւ կարող է գերդաստանը կերակրել, թէև այդ երկու ընտանիքի անդամների թիւը հաւասար են և ունենալ իրաւունք մի գործ վճռելու և դէս ու դէն ընկնել, գիւղ ու քաղաք չափել, խնդիրներ գրելու և այլն ծախսեր անել, դա ապացուցանում է գիւղացու տգիտութիւնը։

Բայց ոչ միայն այդ հարցի մէջ, այլ ինքնավարչութեան բոլոր գործոց մէջ գիւղացին օգուտ

դեաք իսկականը չէ ուղարկվում, որը ծիծաղի տեղ հանդիսականի յարգանքը գուցէ կը չարժէր:

Զը մոռանամ յիշել որ այնտեղ կար և Խմբէթի չորացրած չուրչխելը, բոլորովին սևացած, Ղարաբաղի չէպը, աւուլուկ կոչված հիւսած բանջարը և այլն:

Հանդիսի կենտրոնում չինած է «Լրագրական պավիլիոնը» ուր հասարակութիւնը օգտվում է զանազան լրագիրների ձրիապէս ընթերցանութենից: Այդտեղ ստացվում է և «Մշակ» լրագիրը, որը հայերը մեծ ուրախութեամբ կարդում են: Շատ բաներում «Մշակը» առաջին ճանապարհը բացաւ, թող հանդէսներին բան ուղարկելու ճանապարհն էլ առաջ նա մաքրէ:

Յովհ. Ստեփանեան

## ՆԱՄԱԿ ԱԼԷՔՍԱՆԴՐԱՊՕԼԻՑ

Յուլիսի 29-ին

Նորերումս Ախալցխայից գրված մի թղթակցութիւն «Մեղուի» մէջ յայտնում է, որ այդ քաղաքի հայ-կաթոլիկ հասարակութեան մէջ ծագել է մի մասնաւոր վէճ, որ վերաբերում է մեզ համար մի շատ նշանաւոր խնդրի, այն է, ազգային հայ-կաթոլիկ եկեղեցու մէջ բացի մայրենի լեզուից, մտցնել նաև վրաց լեզուի գործածութիւնը:

Խնդիրն այնքան նշանաւոր է, որ մեզ համար բարոյական մեծ պարտաւորութիւն ենք համարում մի քանի խօսք ասել այդ մասին, աչքի առաջ ունենալով խնդրի կարևորութիւնը մեր ապագայ հասարակական կեանքի մէջ: Ախալցխայի հայ-կաթոլիկ հասարակութիւնը, ինչպէս յայտնի է, գաղթականներ են գլխաւորապէս Էրզրումից, որ կազմում են այդ համայնքի մեծամասնութիւնը, իսկ փոքրամասնութիւն են այն վրացախօս հայ-կաթոլիկները, որոնք երկար ժամանակ ապրելով Վրաստանում, վրաց ազգաբնակութեան հետ խառնուն, կորցրել են իրանց մայրենի լեզուն, և իւրացրել են վրաց թէ լեզուն, և թէ սովորութիւնները: Բայց և այնպէս, նոքա երբէք չեն ուրանում իրանց հայ լինելը, թէև միմիայն ընտանեկան շրջանում գործ են ածում վրաց լեզուն: Թէ պետական իշխանութեան և թէ հոգևոր կառավարութեան կողմից նոքա ճանաչված են որպէս հայ-կաթոլիկներ, և ստորադրված են նոյնպէս Անդրկովկասեան հայ-կաթոլիկ հասարակութեան հոգևոր նախանդամի կառավարութեանը և կատարում են իրանց եկեղեցական բոլոր արարողութիւնները, հայկական եկեղեցական ժամակարգութեամբ: Վրացախօս կաթոլիկ եկեղեցի երբէք գոյութիւն չէ ունեցել Կովկասի մէջ, ոչ վրաց տիրապետութեան ժամանակ և ոչ յետոյ, որովհետև, այժմեան պետական օրէնքների համեմատ երբէք թոյլ չէր տրվում, որ յունադաւան եկեղեցուց դիմէին լատինական կամ մի այլ եկեղեցին և կազմէին առանձին մի կրօնական համայնք:

Բացի դորանից, եթէ ինկատի ունենանք և այն իրողութիւնը, որ սրանից քիչ առաջ, և այժմ մասամբ էլ, Վրաստանում ապրող բոլոր հայերը անխտրաբար խօսում էին վրաց լեզուով, հասկանալի է որ հայ-կաթոլիկներն էլ չէին կարող բացառութիւն կազմել ընդհանուր սովորութիւնից և պէտք է ընկնէին նոյն ազդեցութեան տակ:

Մեր այս յօդուածից դուրս է ընդարձակ տեղեկութիւն տալ ընթերցողին, թէ երբ և ինչպէս է մուտք գործել կաթոլիկութիւնը վրացախօս հայերի մէջ, բայց և այնպէս, չէ կարելի մոռացութեան տալ, որ Հայաստանի վրայով անցել են Անդրկովկաս և Կովկաս զանազան ժամանակներում, կապուցինեան, դոմինիկեան, ֆրանցիսկեան և եզուիտ միաբանութիւնքը, և գործել են անտէր, միամիտ ժողովրդի մէջ, որպէս պապական եկեղեցու պրօպագանդան: Բարեբաղդաբար, այդ բարի միաբանութիւնքը արտաքսվեցան կառավարութեան կողմից իրանց չափազանց քրիստոնէավայել վարքի և բարքի համար, իսկ միամիտ ամբոխը ազատվեցաւ այդ բարերարների ձեռքից: Ցիշելով այդ անարդ և հակաքրիստոնէական միաբանութիւնքը, ամեն մի ճշմարիտ հայ-կաթոլիկ չէ կարող արդարապէս զայրոյթ և ատելութիւն չը զգալ դէպի այդ գայլազգեստ կործանիչները, որոնք անպատիւ կերպով աքսորվեցան բոլոր լուսաւորեալ աշխարհներից, բայց այժմ, նոքա կամենում են պարարտ հող փնտռել Հայաստանի մէջ, որպէս զի ընդարձակեն իրանց խաւար գործերը անտէր մնացած, նիւթապէս աղքատացած հայերի մէջ...

Ինչ է անում հայ-կաթոլիկ հոգևորականութիւնը այդ մարդակերպ հրէշների գործողութեանց դէմ, ճանաչում է այդպիսեաց նպատակները և միջոցները, հասկանում է արդեօք այն մեծ կորուստը, որ պէտք է ունենայ հայ ազգը ապագայում, կամ այդ միայն «դատարկ» բան է նորա համար: Բաւական է, որ նոքա միամտաբար, անգիտակցաբար փառաբանում են պապի անսխալականութիւնը, որի առջև, մեր անհեռատես թուլութեան պատճառաւ խոնարհել են ամեն ազգային սրբազան իրաւունքներ իրանց պաշտելի հետևողութիւններով...

Ախալցխայի հայ-կաթոլիկ հասարակութեան մէջ ծագած խնդիրը, ինչպէս երևում է, այս է, որ վրացախօս հայ-կաթոլիկները մօտ տարիներումս ձեռնադրելով մի վրացախօս քահանայ, կամենում են, որ եկեղեցու հանդիսաւոր ժամերգութեան ժամանակ, գործածվի վրացերէն լեզուն և բացի դորանից, իրանցից ընտրվի եկեղեցու համար և մի երեսփոխան, իսկ հակառակ դէպքում յայտնում են, որ նոքա կը դադարեն նիւթապէս օգնելու եկեղեցուն: Այդ խնդիրը, շատ իրաւացի պատճառներով, մերժվում է միւս հայ-կաթոլիկների կողմից:

Նրանց պատասխանում են. որովհետև, եկեղեցին իր հաստատութիւններով մեզ է պատկանում, մենք ենք համայնքի մեծամասնութիւնը և մեր նիւթական միջոցներով է կառավարվում եկեղեցին, մեր սրբազան պարտականութիւնն է առանց փոփոխութեան պահել և պաշտպանել մեր ազգային եկեղեցին և մայրենի լեզուն: Այդ պատճառով երեսփոխանական իրաւունքը պատկանում է մեզ: Վրացախօս հայ-կաթոլիկների համար կարելի է աւետարան կարդալ կամ քարոզ խօսել վրաց լեզուով միայն այն ժամանակ, երբ հայկական եկեղեցական արարողութիւնը վերջացած կը լինեն, իսկ հանդիսաւոր ժամակարգութեան ժամանակ, օտար լեզուի գործածութիւնը շատ իրաւացի պատճառներով անտեղի և վնասակար են պարզապէս: Ազգային, ժառանգական աւանդութիւնները ամեն մի ժողովրդի հաստատութիւն է, որ կապված է պատմական կազմակերպութեան և ժողովրդական բարոյական կեանքի հետ: Եթէ վրացախօս հայ-կաթոլիկները դուրն հանդամանքների չնորհիւ մոռացել են իրանց մայրենի լեզուն և այժմ խօսում են օտար լեզուով, ինչը կարող է արդելել որ նոքա փոքր առ փոքր ընտելանան դարձեալ իրանց մայրենի լեզուին, և այնպէս միանան եկեղեցական ժամերգութեան և հասարակական կեանքի մէջ: Եթէ իրանք էլ չեն մերժում իրանց հայ լինելը, ուրեմն ինչ պատճառ կայ, որ օտար միջնորդութեամբ կատարեն իրանց կրօնական պարտականութիւնքը: Եթէ նոքա ցանկութիւն ունեն դառնալ նախկին դրութեանը, այդ աւելի լաւ է, քանի որ, հայ-կաթոլիկ եկեղեցին կարող է, կրօնական տեսակէտից նայած, տարածել նրանց մէջ մայրենի լեզուն, յառաջացնելով նաև սիրոյ փոխադարձ կապ, առանձնացած, սովորութիւններով խորթացած համարիւն եղբայրների մէջ:

Այդ խնդրի յարուցվելու պատճառները շատ պարզ են հայ-կաթոլիկներիս համար. մենք շատ անգամ տեսել ենք օտարի միջամտութիւնը մեր հասարակական, ներքին խնդիրների մէջ, և այժմ էլ, այդպիսի տարաձայնութեան յայտնվելը ուղղակի ցոյց է տալիս, վրացախօս հայ-կաթոլիկների պատրաստակամութիւնը օտարի շահի համար... Սրանից առաջ, երբ օտարի մատը կամենում էր խառնել մեր ներքին գործերը, հանդիպում էր հայ-կաթոլիկների կողմից հանդուգնեալ Շահխուլեան վարդապետի պէս մի անձնանուէր մարդու, և այժմս էլ բարեբաղդաբար հայ-կաթոլիկները ունեն հայր Ա. Վ. Արարատեանի պէս հոգևոր ղլուխ, որ պատրաստ է ամենայն ժրաջանութեամբ պաշտպանել ազգային եկեղեցու հաստատութիւնը: Կարող ենք հաստատ ասել, որ այժմեան ազգային ինքնաճանաչութիւնը հայ-կաթոլիկների կողմից, երբէք չի թոյլ տայ որ օտարը իր համար խաղալիք չինէ մեզ համար նուիրական ծէսերն և արարողութիւնները: Մենք շատ հանդամանքներում պէտք է զգոյշ մնանք, քանի որ մենք, մեր սեպհական հոգևոր կառավարութիւնը դեռ չունենք: Եթէ այսօր մենք թոյլ տանք, որ վրաց լեզուն գործածական լինի հայ-կաթոլիկ եկեղեցու մէջ, վաղը կարող են այդ պահանջել և մի քանի տուն լատինացիք, կարող են պահանջել և այն հայ-կաթոլիկները, որոնք խօսում են թուրքաց լեզուով: Ի՞նչ կը լինի այդ ժամանակ. պարզ կերպով մեր ազգային եկեղեցին կը դառնայ բազմալեզու մի կրօնական հաստատութիւն, կորցնելով իր ազգային կազմակերպութեան առանձնայատկութիւնքը: Մեզ համար թող օրինակ չը լինի Թիֆլիսը, իր բազմալեզու կաթոլիկ եկեղեցով: Եթէ այսօր մի դաւառացի կայ-կաթոլիկ գնայ Թիֆլիսի հայ-կաթոլիկ եկեղեցին, ինչ կը տեսնի. կը գտնէ բազմացեղ կրօնակիցներ, որոնք ոչ հասկանում են եկեղեցու պատմական կազմակերպութեան նշանները, ոչ լեզուն, և ոչ արարողութիւնները. ամեն բան խորթ է և օտար: Թիֆլիսի եկեղեցու մէջ կարելի է տեսնել շատ հայ-կաթոլիկներ, որոնք առանձնացած ազգային շրջանից, առանց հայ-կաթոլիկ եկեղեցական արարողութեան բոլորովին հանդիստ կերպով լսում են լատինական երգեհոնը և այդպէս, տարիների ընթացքում, նոքա կարող են կորցնել մայրենի լեզուի քաղցր ժամակարգութիւնը, որ կապ ունի մեր անցեալ պատմութեան, մեր քրիստոնէական նախկին արարողութեան հետ:

Վրացախօս հայ-կաթոլիկները կամենում են, որ իրանցից ընտրած լինի և մի երեսփոխան. այդ, միւս հայ-կաթոլիկների կողմից, մերժվում է շատ իրաւացի պատճառներով: Ախալցխայի վրացախօս հայ-կաթոլիկները, պէտք է ասել, որ բաւական ապահոված դիրք ունեն նիւթական կողմից. նոքա, եթէ եկեղեցու մէջ երեսփոխանական դիրք ունենան, կարող են փոքր առ փոքր հասատաել իրանց դիրքը, կազմելով առանձին կուսակցութիւն, և այդպիսով գիտութեամբ հակառակորդներ լինեն մեր ուսումնարանական գործին: Մեր ուսումնարանները նիւթական կապ ունեն եկեղեցիների հետ, և ինչ զարմանք, եթէ վրացախօս հայ-կաթոլիկները պահանջեն վրաց լեզուի դասաւանութիւնը և ուսումնարաններում:

Մենք այլապէս չենք հասկանում վրացախօս հայ-կաթոլիկների ներկայ անհեռատես վարմունքը: Գուցէ նրանք գործում են օտար թելադրութեան, արտաքին ներգործութեան տակ. գուցէ նրանք կամենում են օգուտ քաղել ներքին երկպառակութիւնից և շահել ապագայի համար մեծ

---

վում են արիւնահեղ կռիւներ. ահագին մահակներ, եղաններ և այլ այդպիսի քնքոյշ գործիքներ ասպարէզ են գալիս և գործադրվում:

Այդպիսի կռիւներին երբեմնապէս պատճառ են տալիս չին. դատաւորների անփորձութիւնից կամ անհոգութիւնից յառաջացած անորոշ վճիռներ: Զոր օր. վճռում են Ա-ին չնութեան տեղ տալ Բ-ի տան պատից մինչ դէմուդէմի պատը. արի ու հիմա, եթէ մարդարէ չես, հասկացիր թէ որ պատից մինչև որը և որքան տարածութեան տեղ:

Շինական դատարանների քննութեան են ենթարկվում գիւղացիների մէջ պատահած կռիւները (բացառութեամբ այնպիսի վէրքերի, որոնք կարող են վնասակար ազդեցութիւն ունենալ վիրաւորվածի առողջութեան վրա:)

Չէ կարելի չը զարմանալ գիւղացու երկաթէ կազմուածքի վրա. այնպիսի վէրքեր, որոնցից քընքոյշ ապրող մարդը ամենափոքրը մի քանի ամիս կը պառկէր, նրա համար անհետևանք են անցնում, նրանք մի քանի օրից կատարեալ առողջ են: Վիրաւորանքները եթէ ծանր են, շինական վարչութիւնը, վիրաւորվածների բժշկական օգնութիւն տալու համար, հրաւիրում է գաւառական բժշկին, որը երբեմնապէս 10—15 օր ետքն է գալիս, այն ժամանակ, երբ, չնորհիւ առողջ կազմուածքի, վէրքերը լաւացած են լինում: Եւ ահա այդ մասին կազմված գործը հաշտարար դատաստանատնից վերադառնում է շին. դատարանը, որովհետև գաւառական բժիշկը յայտնում է թէ վիրաւորվածի վէրքերը թեթև են եղել: Շին. դատարանում այդ գործը կը քնի անարթնանալի քնով, որովհետև գիւղացին հաւատ չէ ընծայում շին. դատարաններին: Այդ հանդամանքը, ընդհանուր դատաստանատներում գործը չը քննվելու պատճառաւ, ես կարծում եմ որ գիւղացիների մէջ եղած արիւնալի կռիւները չեն սակաւանում:

Շինական դատաւորների վճիռները փոխանակ ժապաւինեալ մատեանի մէջ արձանագրելու, գրում են կտոր կտոր թղթերի վրա և ապա ով գիտէ երբ մտցնվում են մատեանի մէջ (երբեմնապէս բոլորովին չեն էլ մտցնվում) և ըստ մեծի մասին կատարվում են առանց բարեխիղճ վկաների ներկայութեանը, այն ինչ դա անհրաժեշտ է վճիռներ կայացնելիս, այնպէս որ այդ վճիռների փոփոխելը անգամ հնարաւոր է և թէև հաստատապէս ինձ յայտնի չ այդպիսի դէպք, բայց պատահել է գիւղացիներից այդպիսի կասկածանքներ լսել:

Եղել են և այնպիսի դէպքեր, որ դատաւորները անգրագէտ են եղել և միայն իրանց պաշտօնական կնիքներով վաւերացնելու են եղել վճիռը և ահա մինը ստորագրում է, իսկ միւսները ոչ. վճիռը ի հարկէ միայն մի ստորագրութեամբ անվաւեր է համարվում, նրան ձգում են վայր ի վերոյ ածած պաշտօնական թղթերի լաբիւրինթոսի մէջ, որից ով գիտէ որքան ինչոցից յետոյ կը գտնեն, դանդատաւորը զարմացքով կը նկատէ որ վճիռը դեռ ևս անվաւեր է, հարկաւոր է նորից դանդատվել, նորից վճռել տալ, որ երկար ժամանակամիջոց անցնելու պատճառաւ ապարդիւն է լինում:

Գիւղական տանուտէրի կամ այլ պաշտօնական անձանց ուղիտութեան պատճառաւ, նրանց արածները քննելու համար յաճախ ատիճանաւորներ են այցելում գիւղերը: Գիւղերի հասարակական ծախսերը հանում են երբեմն խոշոր գումարի: Դիցուք թէ մի գիւղ այցելում է մի ատիճանաւոր, իսկոյն մի քանի առաջաւոր անուանված անձինք սկսում են անչափաւոր ծախսեր անել, պատրուակելով ատիճանաւորի գալուստը, ի հարկէ մի ատիճանաւորին հիւրընկալելու համար չատ բան հարկաւոր չէ, բայց այդ «առաջաւոր» անձինքը իրանք էլ հասարակական փողերով քէֆ անելը շատ սիրելով, ընկնում են անխնայ ուտել, խմել և ծախսը հաշուել հասարակութեան վրա: Այդպիսով բարդվող ծախքի վրա աւելացրէք և այն հանդամանքը, որ ապրանք ծախող կրպակատէրն էլ, օգուտ քաղելով գիւղացու տգիտութիւնից, մինին երկուսն է վերցնում այն բանի համար, որի արժողութիւնը գիւղացին չը գիտէ: Մի անգամ ինձ դիմեցին մի գիւղի բնակիչներ և յայտնելով թէ նրանք, կըրպակից գնած մի քանի բաների գները չը գիտեն, բայց կարծում են որ կրպակատէրը նրանցից աւելի է պահանջում, խնդրեցին գնալ իրանց հետ և ներկայ լինել հաշուատեսութեանը: Եւ ինչ յայտնվեց. կրպակատէրը պահանջել էր Գօնսկոյ գինու իւրաքանչիւր չիշի համար 11 ռուբլի (այդպիսին իբրև չամպայն գինի հաշուելով), անգլիական պօրտերի իւրաքանչիւր չիշի համար վեց ռուբլ և այլն: Կրպակատէրը պահանջել էր գիւղացիներից 62 ռուբլի, իսկ ես այդ հաշիւը իջեցրի և վճարել տուեցի միայն 31 ռուբլի, նշանակում է պահանջած գումարի ուղիղ կէսը:

Պատահում են դէպքեր—թէև հազիւ—որ տանուտէրը երկու անգամ է պահանջում և ստանում այդ ծախսերից մինքանիսները, որովհետև նախ որ այդ ծախքը չէ գրվում դոբա համար սահմանեալ ժապաւինած մատեանի մէջ, այլ շրջաբերական հրամանագրով յայտնվում է տանուտէրի օգնականներին, որոնք այդ հրամանը լսելու մասին ստորագրելով հրամանագրի վրա, վերադարձնում են տանուտէրին և պէտք է յիշել, որ գոնէ գորանց պատճէնն անգամ չեն արտագրում և իրանց մօտ պահում, և երկրորդ որ օգնականները փող վճարելիս երբ ստացական են ստանում, եթէ տանուտէրը դիտաւորութիւն ունի այդ փողերը կըրկին պահանջելու, ստացականի մէջ չէ նշանակել տալիս թէ այդ փողերը որ տարուայ և որ կիսի ծախսի համար է վճարած:

Գիւղացիք վերջին ժամանակ թէև բաւականին ճարպիկացել են, բայց նորանցում պակաս չեն և անհեռատես, պարզամիտ անձինք:

Պակաս չեն դէպքեր, որ գիւղացին մինին պարտք լինելով մուրհակով, ժամանակ առ ժամանակ պարտատիրոջ փող է վճարել, կարծելով թէ այդպիսով պարտքը կը թեթևանայ, բայց որքան մեծ է եղել նորա զարմանքը, երբ փողատէրը նորանից ամբողջ գումարն է պահանջել. ողորմելի վճարողը երդվել և բոլոր սրբերին իրան վկայ է հրաւիրել որ պահանջված փողերի մեծ մասը վճարել է, բայց անօգուտ, որովհետև ոչ սա իր վճարածի մասին ստացական է ստացել և ոչ փողատէրը իր ստացած գումարը մակագրել է մուրհակի վրա:

Պետական լեզուն չը գիտենալից յառաջացած վնասները մեծ են. պատահել են դէպքեր երբ տգէտ թարգմաններ յեղաշրջել են գիւղացու խօսքը, եղել են անդքեր, որ գիւղացիների այդ պակասութիւնից օգուտ քաղելով, նրանց հետ կապած ռուս լեզուով պայմանագրերը, բոլորովին

աղդեցութիւն: Որովհետև աղդային եկեղեցին և ուսումնարանը հաւասարապէս անհրաժեշտ են ներկայ ժամանակի պահանջին, այդ պատճառով, մայրենի լեզուի պահպանողները միայն հաստատապէս պահպանում են աղգայնութեան գաղափարը: Առանց մայրենի լեզուի երբէք չէ կարող գոյութիւն ունենալ ոչ մի կրօնական համայնք, և ոչ մի աղգութիւն:

Պետրոս Բէպուրեան

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Լսում ենք որ բացի Տրապիզոնի Համաղգային հայոց դպրոցի տեսչից, պ. Մեղաւորեանցից, հասել են Թիֆլիս, լմնելի ուսուցչական ժողովին ներկայ գտնվելու համար, Տրապիզոնի և մի այլ դպրոցի, այն է Աղգային դպրոցի տեսուչը և վարժապետը:

—

Շնորհակալութեամբ ստացանք ԽԱՐԿՕՎԻ բժշկականութեան պրոֆէսոր պ. Շլեթեանցից նրա երկու ժողովրդական բժշկական զրքոյկները ռուսերէն լեզուով, այն է «Нужно-ли лечиться» և «Новый путь для здоровья» վերնագրով:

## ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ԹԻՒՐՔԻԱ

Բերլինի „Vossische Zeitg.“ լրագրում տպված էր Կ. Պոլսից մի թղթակցութիւն մի հայ աղջկայ մասին, որին բռնի կերպով մահմետականութեան էին դարձրել: Ահա ինչպէս է նկարագրում գերմանական լրագիրը այն անցքը որ պատահել է դատարանում այդ բռնի կրօնափոխութեան առիթով բացված դատի ժամանակ:

Սկուտարիի դատարանում արտիլլերիայի գլխաւոր Էդհէմ-փաշան հրաւիրված էր Զեվդէթ-փաշայից յետ տալ աղջիկը: Էդհէմի մի ծառայ ուղեկցում էր աղջկան դատարանի մէջ: Իսկուհին, այնպէս է կոչվում աղջիկը, հագնված էր խանումի պէս, բայց հէնց որ նա իր մօրը տեսաւ, նա ընկաւ նրա գիրկը աղաղակելով. „ես հայուհի եմ և կամենում եմ հայուհի մեռնել“: Դատաւորը հրամայեց որ Իսկուհուն իր մօրը յանձնեն. աննկարագրելի էր աղջկայ երջանկութիւնը: Յետոյ Իսկուհին բացատրեց որ նա երբէք ընդունած չէ մահմետականութիւնը և փաշայի մօտ բռնի բուն նշանակութեամբ գերի էր: Ինչ որ հայոց պատրիարքին է վերաբերվում, աւելացնում է գերմանական լրագիրը, նրա վարմունքը պարսաւելի արժանի է: Նրա պարտաւորութիւնը կը լիներ աչքի առնել մոր շահերը, որից իր աղջկան յափշտակեցին, փոխանակ թշնամու հետ նրա դէմ միաւորվելու:

Մի քանի օրից յետոյ „Vossische Zeitg.“ լրագիրը զետեղեց իր էջերի մէջ հետևեալ, ինչպէս երևում է տեղեակ աղբիւրներից, առած հերքումը:

Մեզ գրում են հետևեալը: Ձեր յարգելի լրագրում կարդացի մի թղթակցութիւն Կ. Պոլսից, որ ինձ առիթ է տալիս խնդրել ձեզ հետևեալ նկատողութիւնն ընդունելու: Ձեկուցում տալով մահմետականութեանը բռնի կերպով դարձած հայ աղջկայ գործի դատաքննութեան մասին, ձեր թղթակիցը վերջացնում է իր այդ զեկուցումը մի ծանր մեղադրանք բարձելով հայոց պատրիարքի վրա, տալով այդ մեղադրանքին մի վիրաւորիչ կերպարանք: Այդ մեղադրանքը պատրիաքարանի դէմ արդար չէ, ինչպէս հետևեալից երևում է: Արդէն մօտ մի տարի է, որ պատրիարքարանը կորցրեց իր առաջնորդին, պատրիարքին: Ներսէսը տուեց իր հրաժարականը հայոց աղգային-ժողովին և պնդեց իր այդ հրաժարականը և Բ. Դրան առջև, որովհետև նա իրան անկարող էր զգում մարտնչելու այն բոլոր անօրէն վարմունքների դէմ, որոնք ամեն օր կատարվում են Հայաստանում, անկարող էր զգում նոյնպէս մարտնչելու վարչութիւնների բոլոր զեղծումների դէմ: Ցարիներով նա իմացաւ վստահութեամբ և քաջութեամբ պաշտպանել իր աղգի շահերը Բ. Դրան բոլոր ինտրիգաների դէմ: Անդադար յիշեցնում էր նա Բ. Դրանը նրա խոստումները Բերլինի դաշնագրի 61-որդ յօդուածի կատարման մասին: Բոլորը ապարդիւն: Հայերը ստիպված էին տուժել իրանց առաջնորդի եռանդը. նրանք աւելի էլ մանավեցան փաշաների և նրանց ամբողջ խնամութեան ճնշման, աւելի էլ ենթարկվեցան քիւրդերի աւազակութիւններին, որոնք ոչ թէ միայն ծածուկ, այլ և բացարձակապէս դրական օգնութիւն էին գտնում գաւառական պաշտօնեաների կողմից: Ուրեմն ի՞նչ շահեր պէտք է պաշտպաներ պատրիարքը: Ձեր թղթակցից հաղորդած փաստը հարիւրներից և հազարներից մէկն է, որոնք աւելի ողբերգական, աւելի դազանային և աւելի անարդ են, և որոնք, այնու ամենայնիւ գրեթէ ամեն օր կրկնվում են: Կատարեալ անկարողութիւնը Բ. Դրան մօտ իրան լսելի անելու, կատարեալ առանձնացած դիրքը, որի մէջ գտնվում էր Ներսէս պատրիարքը, նրա իր պաշտօնից հրաժարվելու պատճառ եղան: Այդ հրաժարվելը, ի հարկէ, շատ հաճելի է Դրան համար, որ այդ հանգամանքից օգուտ է քաղում պատրիարքական նոր ընտրութիւններն արգելելու և աւելի լայն իրաւունքներ տալու գաւառական հայ եպիսկոպոսներին, որպէս զի աշխատի նրանց անկախ դարձնել Կ. Պոլսի պատրիարքարանից և ուրեմն այդ վերջինին որպէս այսուհետև աւելորդ մի հիմնարկութիւն, կատարելապէս վերցնի, մի և նոյն ժամանակ ազատվելով, մի անգամ ընդ միշտ, պատրիարքի իր համար ծանրացուցիչ պահանջմունքներից, պատրիարքի, որին մինչև այժմ ստիպված էր ազգի գլուխ ճանաչել: Արդէն այժմ պատրիարքարանը անդամալոյծ է արած և արդար չէ նրան անգործութեան մէջ մեղադրելու: Մի գործնական օգնութեան հայերը իրաւունք կունենային ուրիշ կողմից սպասել: Բայց այն պետութիւնների ներկայացուցիչները, որոնք ստորագրեցին Բերլինի դաշնագիրը միշտ զբաղված են բարձր դիպլոմատիական խնդիրների լուծելով և անտես են արել պաշտպանութիւն հասցնել մի քրիստոնեայ ազգին, որ թէև սպասում է Եւրոպայի ազնիւ խոստումների կատարումն, բայց որ այնու ամենայնիւ յանձնված է սիստեմական բռնաբարութեանը: Պատրիարքարանը արժանի չէ մեղադրանքի. հայոց ազգը շատ լաւ գիտէ և գնահատում է ինչ տեսակ վտանգների ենթարկվելով, ինչքան եռանդ և քաջութիւն գործ դնելով, նա Ներսէսի առաջնորդութեամբ ընդհանրութեան շահեր էր ներկայացնում և այդ շահերը պաշտպանում:

## ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

74 օրեայ քուն: Նորերումս Փարիզի լրագիրները հաղորդում էին, որ մայիսի առաջին թվերում ֆրանսիական մայրաքաղաքի փողոցներից մէկի վրա անզգայ դրութեան մէջ գտան և հիւանդանոց տարան մի կնոջ, որ մահաքնի մէջ էր գտնվում: «Temps» լրագիրը այդ օտարոտի երևոյթի վերաբերութեամբ մի քանի տեղեկութիւններ է հաղորդում: Բժիշկ Միլիար ցոյց տուեց, որ երիտասարդ աղջիկը յղի է: Այդ դրութիւնը աւելի ևս դժուարացրեց հիւանդին խնամելու միջոցը: Առաջին երկու շաբաթների ընթացքում բժշկական գիտութեան բոլոր միջոցները գործ էին դնվում կեանք տալու համար այդ կենդանի հանգուցեալին, բայց բոլոր աշխատութիւնները իզուր էին: Նայելով այդ հիւանդ աղջկայ վրա, որ անշարժ պառկած էր անկողնի մէջ, բերանը բաց, մոմի գոյնով և դէմքի կծկված դծագրութեամբ, կարելի էր կարծել, որ գտնվում ես դիակի առաջ, եթէ որ յաճախաբաղ շնչառութիւնը չը տար այդ մարմնին, որ մնացած բոլոր բաներում անզգայ էր, կեանքի նշան: Հիւանդին կերակրելու համար, արհեստական կերպով բուլիոն էին մտցնում նրա ստամոքսի մէջ: Այդ բանը մայիսի կէսին էր: Օրերը անցնում էին օրերի ետեից, ոչինչ փոփոխութիւն չը բերելով քնած կնոջ դրութեան մէջ: Հարցնում էին, թէ կարող է արդեօք երեխայ ծնվել այդ հանգամանքներում,—և մի քանի օր առաջ նա մեռած երեխայ ծնեց: Երեխան հինգ ամսականից մեծ էր: Ծնելու ժամանակ մայրը ցաւի ոչ մի նշան չը ցոյց տուեց: Ցոյս ունէին, որ այդպիսի հանգամանքների ժամանակ նա կը զարթնի. ի զուր յոյս: Ծննդկանը ոչ մի շարժում չը գործեց: Շատ գիտնականներ այցելեցին Բոժոնի հիւանդանոցը: Բոլորը այն կարծիքի էին, որ հիւանդին հարկաւոր է սառը դուշ: Վճռեցին այնու ամենայնիւ սպասել, մինչև որ հիւանդի դրութիւնը կը թոյլ տայ փորձել այդ միջոցը: Վերջապէս բժիշկ Շարկօ յարմար համարեց առաջին սառը դուշի գործածելը: Հիւանդը չարթնացաւ: Բայց երբ որ բժիշկը յուլիսի 13-ին, երեկոյեան, հիւանդի վրա փորձեց մի և նոյն միջոցը երկրորդ անգամ, 74 օրեայ մահաքունից յետոյ հիւանդը բացեց աչքերը և մի քանի շարժումներ արաւ: Վերջապէս, յուլիսի 16-ին առաւօտեան, նա երևում էր թէ հասկանում է ամեն բան, ինչ որ կատարվում էր իր չորս կողմը: Այնու ամենայնիւ, նա չէր կարողանում ոչ մի խօսք արտասանել: Երբ հիւանդին հարցեր էին առաջարկում, նա միայն կոկորդային ձայներ էր արձակում: Այդ նոր և գիտութեան ժամանակագրութեան մէջ միակ դէպքի մասին լուրը հասաւ տիկին Վերօն անունով մի տիկնոջ ականջին: Այդ տիկինը յուլիսի 12-ին դալով Բոռին Կայսերական Մեծութիւն Թագաւոր Կայսրը ամենամեծ ուշադրութիւն է դարձրել կալուածական խնդրի և նորան լուծելու վրա, և հաստատապէս գիտնալով որ հեռու չէ այն րոպէն, երբ գիւղացիների նորանց ճանկից ազատվելու ժամը կը հնչէ, այժմ քանի որ դեռ ձեռքերումը իրաւունք կայ, աշխատում են ժողովրդի ծուծը քամել, զանազան օձապտոյտ ճանապարհներով նորանցից աւելի փող գլչել: Պատահել են—և այն յաճախ—դէպքեր, որ զանազան պատճառներով չեն թողել գիւղացուն, իր ժամանակին հացը կալսել, այլ թողել են դարսած, մինչև որ գիւղացին տեսնելով իր արմտիքների փչանալը, աղաչել, պաղատել, մի բան էլ աւելի է առաջարկել և ապա թոյլատրութիւն ստացել: Պատահել են և այսպիսի ցածութեան դէպքեր, որ կալուածատէրը գիւղացուն թոյլատրել է իր հացը կալսել, գիւղացին այդպէս էլ արել է, բայց բծախնդիր կալուածատէրը պրօտօկոլ է չինել նորա վրա, իբրև թէ սա ինքնակամ է արել այդ բանը, իսկ սա այնքան ծանօթ չը լինելով դատարանական կանոնների հետ որքան կալուածատէրը, զընացել է վերջինի մօտ, ոտքերն է համբուրել, խնդրել որ գործը չը շարունակէ:

Մի գիւղ, որ բաղկանում է մօտ 30 տնից, ունեցել է և ունի միայն 136 դեսիատին հող: Թէ որքան քիչ է այդ քանակութիւնը, ինքն ըստ ինքեան հասկանալի է: Այդպիսի մի աննշան գիւղ, այդպիսի քիչ հողի համար 1880 թուին, թանգութեան միջոցին տուել է կալուածատիրոջը՝ ցորեն, դարի, իւղ, խոտ և այլն 3,000 ռուբլու:

Այդ զժբաղդ գիւղացիք սաստիկ նախանձով են վերաբերում արքունական տեղերի վրա բնակվող գիւղացիների ազատութեանը. նոքա լսել են որ իրանք ազատվելու են և անհամբերաբար սպասում են այդ օրուան: Եւ թէ ինչ իրաւունքներ են բանեցնում գործնք պարզամիտ գիւղացիների վրա, նորանց մանաւոր գործերի մէջ խառնվում են, նորանց ծեծում են, խեղճ տանուտէրն էլ մի մի խաղալիքներ են այդ պարոնների ձեռքին:

Գուցէ ոչ մի նահանգ այնքան ծանրաբեռնված չէ կոռ ու բէգեար տալով, որքան Թիֆլիսինը: Իւրաքանչիւր տարի կամ այս կամ այն ճանապարհն են շինվում և գիւղական բնակիչները ոչ սակաւ վնասվում են: Բօրժօմ—Ախալքալաքեան ճանապարհի մի աննշան մասը՝ Ախալքալաքի ձորի ել և էջը, գաւառիս բնակչաց վրա 20,000 ռուբլուց աւելի նստեց: Այդ ճանապարհները շինելիս գլխաւոր աշխատողները աղքատ գիւղացիք են, իսկ հարուստները եթէ ոչ միշտ, գոնէ երբեմնապէս, չնորհիւ գիւղական պաշտօնական անձանց ազատվում են: Թէև կոռ ու բէգեարը (натуральныя повинности) գրելու համար իշխանութիւնից տրված են ժապաւինած մատեաններ, բայց դրանց մէջ շատ տեղերում ոչինչ չեն գրում, այլ գրում են կտոր կտոր թղթերի վրա և ի հարկէ այդպիսի ճշմարտութիւնը շուտ կարելի է ստնատակ անել: Այդ պատճառով էլ, երբեմնապէս մշակների կողմից հակառակութիւններ են լինում աշխատելու դնալու, որովհետև գիտեն որ հերթը իրանցը չէ, բայց ահա սատիճանաւորը մի քանի ձիաւորով այդտեղ է հասնում և առանց մշակների առարկութիւններին նայելու, ուղարկում է դորանց աշխատանքի տեղը:

Այսպիսի հանգամանքներից մարդս համոզվում է, որ գիւղացին այնքան դեռ ևս չէ հասունացել նորան տուած ինքնավարութեան արժանի լինելու համար: Բաւական է յիշել որ գիւղացիներից շատերը ներկայ դրութիւնից աւելի լաւ են համարում նախկին պօլիցիական սիստեմը, երբ չինովնիկները չը կային:

Գիւղացիք իրանց տգիտութիւնից չեն ճանաչում այն առանձին իրաւունքների արժէքը, որ տուել է նորանց բարեխնամ կառավարութիւնը:

Ի վերջոյ ես կասեմ որ ներկայ դարը, քնելու, տգիտութեան դար չէ. պէտք է արթուն լինել, հասկանալ իրաւունքները, կարողանալ դորանց պաշտպանել, ապա թէ ոչ այնպէս փառաւոր կերպով վերնագրեստ կը հանեն, որ չես էլ իմանայ: Մարդս չէ կարող սառնարիւնութեամբ նայել թէ ինչ է կատարվում իր շուրջը, երբ տեսնում է թէ ինչպէս անտարբեր են դէպի հասարակական շահերը, ոչ միայն գիւղերի, այլ և քաղաքիս բնակիչները:

Մինչև որ ինքնաճանաչութիւնը և լուսաւորութիւնը կը տարածվի ժողովրդի մէջ, զանազան բաղդախնդիր անձինք արձակ ու համարձակ, մեր բոլորիս աչքի առաջ, ինչ որ կուզեն այն կանեն և մենք այնքան անզարգացած ենք դեռ ևս, որ ձայն չենք տալիս: Բայց կը գայ մի օր, որ ճշմարտութիւնը իր ձայնը կը հնչեցնէ և այն ժամանակ վայ բաղդախնդիրներին: Առ այժմ դրանցից կը խնդրենք չը մոռանալ, որ կան նորանց արարքների վրա հսկող անձինք:

Խ. Մաւանկոզեանց

---

ուրիշ կերպ են դրել, քան թէ պայմանաւորված են եղել:

1879 թուի «Մշակի» համարներից մինի մէջ տպված նամակում ես հաղորդում էի թէ Վ. գիւղի բնակիչք օգուտ քաղելով Ն. Կ. Բ. Մեծ Իշխան Փոխարքայի իրանց գիւղի մօտով անցկենալից, կամեցել էին իրանց մի քանի ցաւերը յայտնել Նորին Բարձրութեանը, բայց ամբողջ գիւղում մի ռուսախօս մարդ չէր գտնվել նորանց խօսքերը թարգմանելու համար:

Գիւղացիների անտարբերութեան ապացոյցների մինն էլ հետևեալն է:

Պ. Նահանգապետի կարգադրութեամբ, իւրաքանչիւր տարի գիւղերից դաշտային պահապաններ են պահանջվում, գիւղական սահմանները աւազակութիւններից պահպանելու նպատակով, բայց բանը նրանումն է, որ դոքա մեծ մասը գիւղերում վայր են ընկած և գիւղացիք չեն էլ մտածում դրա դէմ բողոքելու: Մինչև անգամ պատահել է որ դորանք փոխանակ իրանց պաշտօնը վարելու որբութեամբ, նեղացրել են ճանապարհորդներին, նրանցից փէշքեաշներ են ստացել և արձակել են:

Խօսելով արքունական հողերի վրա բնակվող գիւղացիների մասին, ես հարկաւոր եմ համարում մի քանի տող էլ գրել կալուածատիրական հողերի վրա բնակվող գիւղացիների մասին: Վերջիններիս վիճակը անհամեմատ ծանր է առաջինների վիճակից: Վեր առած մի երկու կալուածատէրերին—որոնք փոքր ի շատէ խղճմտաւոր և բանիմաց անձինք են,—մնացեալները, մի մի արիւնաքամ ոգրուկներ են:

Մանաւանդ վերջերումս դոքա տեսնելով որ Նորին Կայսերական Մեծութիւն Թագաւոր Կայսրը ամենամեծ ուշադրութիւն է դարձրել կալուածական խնդրի և նորան լուծելու վրա, և հաստատապէս գիտնալով որ հեռու չէ այն րոպէն, երբ գիւղացիների նորանց ճանկից ազատվելու ժամը կը հնչէ, այժմ քանի որ դեռ ձեռքերումը իրաւունք կայ, աշխատում են ժողովրդի ծուծը քամել, զանազան օձապտոյտ ճանապարհներով նորանցից աւելի փող գլչել: Պատահել են—և այն յաճախ—դէպքեր, որ զանազան պատճառներով չեն թողել գիւղացուն, իր ժամանակին հացը կալսել, այլ թողել են դարսած, մինչև որ գիւղացին տեսնելով իր արմտիքների փչանալը, աղաչել, պաղատել, մի բան էլ աւելի է առաջարկել և ապա թոյլատրութիւն ստացել: Պատահել են և այսպիսի ցածութեան դէպքեր, որ կալուածատէրը գիւղացուն թոյլատրել է իր հացը կալսել, գիւղացին այդպէս էլ արել է, բայց բծախնդիր կալուածատէրը պրօտօկոլ է չինել նորա վրա, իբրև թէ սա ինքնակամ է արել այդ բանը, իսկ սա այնքան ծանօթ չը լինելով դատարանական կանոնների հետ որքան կալուածատէրը, զընացել է վերջինի մօտ, ոտքերն է համբուրել, խնդրել որ գործը չը շարունակէ:

Մի գիւղ, որ բաղկանում է մօտ 30 տնից, ունեցել է և ունի միայն 136 դեսիատին հող: Թէ որքան քիչ է այդ քանակութիւնը, ինքն ըստ ինքեան հասկանալի է: Այդպիսի մի աննշան գիւղ, այդպիսի քիչ հողի համար 1880 թուին, թանգութեան միջոցին տուել է կալուածատիրոջը՝ ցորեն, դարի, իւղ, խոտ և այլն 3,000 ռուբլու:

Այդ զժբաղդ գիւղացիք սաստիկ նախան-

ժՀնի հիւանդանոցը, խնդրեց ցոյց տալ իրան հիւանդի անկողինը. սկզբից տիկին Վերօն տատանվում էր հիւանդին իր աղջիկ ճանաչել. նրա աղջիկը չէր կարող այդքան մեծ լինել: Ճիշդ էլ, հիւանդը, որը, մօր խօսքերով, 23 տարեկան է, կարծես երեսուն տարեկան լինի: Երկու օրից յետոյ տիկին Վերօն կրկին վերադարձաւ և այս անգամ դրականապէս հաւատացրեց, որ հիւանդը իր աղջիկն է: Հիւանդը, իբր թէ, նոյնպէս ճանաչեց իր մօրը, որովհետև նրա աչքերում արտասուքներ երևեցան և նա սեղմեց իր մօր ձեռքը: Տիկին Վերօն յայտնեց, որ իր աղջկայ անունն է Մարիա-Վիկտորիա-Ֆլօրա, որ ինքն եօթ տարի է չէ տեսել նրան: 1875 թուին նա հեռացաւ ծնողական տնից այլ ևս չը վերադառնալու համար: Մանկութիւնից նա այդ հիւանդութիւնը ունէր: 1870 թուին, պրուսական արշաւանքի ժամանակ, նա մահաբնով քնած էր: Զը նայելով այդ բոլոր տեղեկութիւններին, բժիշկները կասկածում են և չեն հաւատում նրա խօսքերին, որովհետև տիկին Վերօնի ցուցմունքների մէջ շատ հակասութիւններ են պատահում. օրինակ, մայրը հաւատացնում է, որ իր աղջիկը պատանեկութեան ժամանակ օղեր էր կրում, այն ինչ հիւանդը բլթակներ չունի ականջների վրա: Այդ պատճառով, մինչև որ հիւանդը խօսելու ընդունակութիւն չը ստանայ, հիւանդանոցում հրաժարվում են հաւատալ, որ տիկին Վերօն այդ օտարոտի հիւանդի մայրն է:

## «ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

### ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 9 օգոստոսի: „Правит. Вѣстн. լրագիրը հաղորդում է. մեծ իշխան Վլադիմիր Ալէքսանդրովիչ ուղևորվեցաւ արտասահման: „Голосъ“ լրագիրը հաղորդում է, որ կոմս Լիտկէ վախճանվեցաւ: Սիբիրիայի մէջ մոնտելի վերանորոգութիւնների նախագիծը քննող մասնաժողովը վերջացրեց հին դատաստանավարութիւնը նորով փոխարինելու հարցի քննութիւնը: „Новости“ լրագիրը հաղորդում է, որ կառավարութիւնը մտադիր է թոյլ տալ գաղթականութիւնը միայն այն գիւղացիներին, որոնք բաժնի (надѣлъ) ամենամեծ չափի երրորդականից աւելի չունեն մի և նոյն ժամանակ այդ թոյլտուութիւնը տալ քիչ հող ունեցող գիւղացիների միայն կէսին:

ԼՕՆԴՕՆ, 9 օգոստոսի: Անգլիացիները գրաւեցին Պօրտ-Սայիդ և Իսմայիլիա գրեթէ առանց ընդդիմադրութեան: Զրանցքը նրանց ձեռքին է:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 8 օգոստոսի: Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 94 ր. 75½ կ., երկրորդ 90 ր. 50 կ., երրորդ 90 ր. 50 կ., չորրորդ 90 ր. 25 կ., հինգերորդ 90 ր., ներքին 5% առաջին փոխառութեան տոմսակը արժէ 214 ր. 50 կ., երկրորդ 213 ր. 5 կ., արևելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 89 ր. 62½ կ., երկրորդ 89 ր. 75 կ., երրորդ 89 ր. 50 կ., ոսկի 8 ր. 23 կ.: Ռուսաց 1 ռուբլ Լոնդոնի վրա արժէ 24,12 պէնս, ռուսաց 100 ր. Համբուրգի վրա արժէ 206 մարկ, Փարիզի վրա արժէ 253 ֆրանկ: Բօրսայի տրամադրութիւնը հանդարտ է:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

**ԵՐԴՎԵԱԼ ՀԱՒԱՏԱՐՄԱՏԱՐ** Սերգէյ Վասիլեվիչ **ՉԵՄԵՍՕՎ** տեղափոխվեցաւ Գօլօվինսկի հրապարակ, տուն Բէլօի:

3—6

ՄԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՈՒՍԱՆՈՂ, որ այժմ արդէն Մանգլիսումն է ապրում, յանձն է առնում պարապել երեխաների հետ՝ թէ ալգեբրական և թէ հայոց ուսումնարանների աշակերտների և աշակերտուհիների հետ:

Պայմանները կարելի է առաջարկել հետևեալ հասցէով. Манглисъ, Габріэль Мирзоевъ, въ рощѣ, дача Марѳы Тимоѳѣевой.

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ** նախապատրաստութիւնները հոգացող կարդադրիչ ցանկանում է այն պարոններին, որոնք որ և է **ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ** ցանկանում են ստանալ **ՑԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՑ** կամ հաղորդել նորան, որ բարեհաճեն **ՇՆՈՐՀ ԲԵՐԵԼ** նրա **ԳՐԱՍԵՆԵԱԿԸ ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԷՐԻԻ ՄԷՋ № 170:** Գրասենեակը բաց է **ԱՄԵՆ ՕՐ** առաւօտեան 9 ժամից մինչև 11 ժամը:

**ՄԻ ՀԱՄԵՍՏ ԸՆՏԱՆԻՔ** առաջիկայ սեպտեմբերից յանձն է առնում **ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ** բնակարան և **ԿԵՐԱԿՈՒՐ** տալ բաւական ձեռնտու պայմաններով: **ԴԱՍԵՐԻ ԿՐԿՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ** համար առանձին պայմաններ: Վարձի մասին կարելի է տեղեկութիւն ստանալ **Պ. ՄՈՎՍԷՍ ՎԱՐԴԱՆԵԱՆԻՑ** իր **ՏՊԱՐԱՆՈՒՄ**, փօստատան եռաւի փողոցի վրա:

6—8

**ԹԷՅ** առաջին հունձի այս տարի չափազանց գոյնաւոր և հոտաւէտ: Այդ թէյից **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ** մէջ ստացված է 50,000 ֆունտ և ծախվում է 25% էժան և աւելի լաւ քան թէ ուրիշ տեղ: Օրինակ. Լաւ ԿՕՆԳՕ թէյ 1 ր.—1 ր. 20 կոպ., պատուական ՍԱՆՖԱ թէյ 1 ր. 40 կ., հիանալի ՄՕՆԻԿ թէյ 1 ր. 60 կ. այս թէյ ամեն տեղ ծախվում է 2 ր.—2 ր. 50 կ., գեղեցիկ ԿԱՑՍԱՈՒ թէյ 1 ր. 80 կ. և ամենալաւ ֆու-չու-ֆու թէյ 2 ր. մաքուր թէյ առանց թղթի: Նոյն տեղը սովորաբար լինում են 500 երկաթէ ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ 6 ր.—60 ր., երկաթէ ԳՐԻՉՆԵՐ ամբողջ Անդրկովկասի համար, շոկոլադ ֆրայ, Շեվիլդի ԴԱՆԱԿՆԵՐ, վերականգնող ՄԱԿՄԱՍՏԵՐ մազերի համար, հրացաններ ԴԱՈՒ, ՐԷՎՕԼՎԵՐՆԵՐ վերլի, ԹԱՄԲԵՐ բարներբի, կոլմանի նշշրշտայ, ԱԼԲՕՄՆԵՐ Շվարցի էս գնով: **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹ, ԹԻՖԼԻՍԻ ՄԷՋ ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԷՐԻՅՈՒՄ № 156, 157, 158, 159 և 100:**

20—100

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ ՆՈՐ ԳՐՔՈՑԿ

**„ՍՐԻՆԳ ՀՈՎՈՒԱԿԱՆ“**

ԵՐԳԵՐ, ՈՏԱՆԱՒՈՐՆԵՐ ԵՒ ԱՌԱԿՆԵՐ

*ընթերցասէր մանուկների համար*

ՏԱՆԸ ԵՒ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՈՒՄ

ԳՐԵՑ Ղ. ԱՂԱԵԱՆՑ

Վաճառվում է Վ. Շահվերդեանի Լրագրական խանութում: Գինն է 20 կոպ. օտար տեղերից դիմում են հետևեալ հասցէով: Тифлисъ, въ газетное Агентство В. Шавердова.

9—25

**ԱԹՈՌՆԵՐ**

Վիէննայից ստացված զանազան տեսակներից, իբրև օրինակ մին մին դուժին, „Թոնեթ“ ֆաբրիկայից: Դիմել Սալի-Օղլի գործարանում Նուրանեանցին.

3—3

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ** անդամակցութեան **ՏՈՄՍԱԿ** ցանկացողները կարող են ստանալ Ուսուցչական ժողովի **ԳՐԱՍԵՆԵԱԿՈՒՄ**, որ գտնվում է **ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԷՐԷՅՈՒՄ № 170.** ՏՈՄՍԱԿԻ գինը 2 ռուբլ է:

**ԻՐԱՒԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ**, Գօլովինսկի պրոսպեկտի վրա, տուն Ճարտարապետ Բէլօի: Գրասենեակը բաց է առաւօտեան 9 ժամից մինչև 3 ժամը կէս օրից յետոյ և երեկոյեան 7—10 ժամը ամենայն օր, բացի կիրակի օրերից և մեծ տօներից:

ЕЖЕНЕДѢЛЬНЫЙ ЖУРНАЛЪ

**„ЮРИДИЧЕСКОЕ ОБОЗРѢНІЕ“**

издаваемый въ г. Тифлисѣ

(годъ второй)

**Открыта полугодовая подписка на журналъ съ 1 іюля 1882 г. по 1 января 1883 года. Цѣна за полгода 6 руб.**

Кромѣ того можно подписаться на 3 мѣсяца 3 р. 20 к., на 1 мѣсяцъ 1 р. 20 к. Подписка принимается съ 1 числа каждаго мѣсяца и не далѣе конца года.

Полугодовые подписчики могутъ взносить при подпискѣ 3 р. и черезъ мѣсяцъ еще 3 руб.

Подписка принимается въ г. Тифлисѣ въ администраціи журнала Сололакская улица д. № 10 и въ Москвѣ и въ С.-Петербургѣ въ книжнихъ магазинахъ И. П. Анисимова.

8—10

ՕԳՈՍՏՈՍ ԱՄՍԻ ՄԷԿԻՑ

**ՍԿՍԵՑ ՀՐԱՏԱՐԱԿՎԵԼ ՎԻԷՆՆԱՅՈՒՄ**

# L'ORIENTAL

ՖՐԱՆՍԵՐԷՆ ԹԵՐԹԸ, ԱՄԻՍԸ ԵՐԿՈՒ ԱՆԳԱՄ:

„Ժուրնալ դ'Օրիան“ լրագրի հին բաժանորդներին դադարեցրած թերթի տեղ կուղարկվի այդ նոր հրատարակութիւնը:

„L'Oriental“ թերթի տարեկան գինը 8 ռուբլ է, կէս տարվանը 4 ռուբլ:

Գրվել կարելի է „ՄՇԱԿԻ“ խմբագրութեան մէջ, կամ ուղղակի Վիէննայում դիմելով հետևեալ հասարակ հասցէով. Vienne (Autriche) M. F. Salles I. Neuer Markt 9.

Միջի փողոց, կաթոլիչեսկայա փողոցի անկիւն № 13.

**Աւելի էժան, քան թէ ուրիշ տեղ ծախվում են.** ՎԻԷՆՆԱՑԻ ՄԵԲԵԼ ամենայն տեսակ, ֆրանսիական և անգլիական երկաթէ ԿՐԱՎԱԹՆԵՐ 8—30 ր., չամադաններ 250—25 ր., սակվոյաժներ 1. 30—12 ր., սուն դուկներ ճանապարհի 6—35 ր., մարաններ (погребцы) 6—25 ր., սամովարներ 60 կ.—1.25 ֆունտը., կուխոնի պղնձէ ամաններ, Գերմանիայի երկաթէ էմալով ամաններ. ուտիվալնիկներ մրամորնի 38 ր.—75 ր., հրացաններ երկու լուլանի 6—32 ր., ռէվոլվէրներ ամենայն տեսակ 3. 50—30 ր., պատրոնները. (գուլաններ) րէվոլվէրի, սիգար Ռէնգարդի ֆաբրիկից. պապիրոս և թամբաքու կուշնարօվի գիլզի պապիրոզի. 5,000 ՖՈՒՆՏ ԹԷՅ (չայ) ԵՎ ՊԱՊՈՎՆԵՐԻ, բիսկվիտ. (սուխար չայու և կաֆէի) էլինէմի. կօֆէ էլինէմի և Միխէլսօնի. Պետերբուրգում 40—1 ր. 25 կ. հայելիներ ամենայն տեսակ 28 կ.—240 ր., պրոբկայ գինէվաճառների, հանքային և գարեջրի (для зельтерскихъ водъ и пива) ղուլթուկ (пухъ), պաղնոսներ սամովարի և չայու, դանակ չանգալ զանազան ֆաբրիկաների 1 ր. 20 կ.—25 ր. դուժինը. գրչակոթներ 1 ր. 80 կ.—5—60 կ. դանակ ջիրի 1—60 կ.—12 ր., դանակ հացի 20 կ.—1 ր., հատը, կուխոնի 1—40 մինչև 3—20 կ. պրիբօրմիս կարելու մաշինայ. Անգլիական ութներ, Բրիտանսկի չայնիկներ, կաֆէինիկներ ամենայն տեսակ, Ջաղացներ կաֆէի համար, ֆիլտեր—ջուր մաքրելու, կրախմալ կարօբկէն 18 կ., վաքս Ֆրանսիայի ժակոյ, թուղթ փոշտի, կանվերատներ, սուրգուչ, մատիտ, գրիչ երկաթէ, գրչակոթ, քարտախտակ, թանաք, թանաքամաններ, պրեսպապիեներ, գդալներ սեղանի և չայու ֆրաժէ, վարշավի և բրիտանսկի դուժինը 1—50 կ. մինչև 12 ր., և չայու 45 կ.—5 ր., չուտիչկէք 45 կ.—5 ր., շամադաններ ամեն տեսակ 25 կ.—12 ր. ջուխտ, պոլսապոշկաններ վարշավու, ՌԵԶԻՆԻ ԿԱԼՕՇՆԵՐ, ամեն տեսակ, գուլբաններ կանանց և մարդկերանց 15 կ.—50 կ. ջուխտ, շապիկներ, մարդկերանց գալուստիկներ, զոնտիկներ 35 կ.—4—50 կ., հատ, անձրևի և շոքի. սանդրեր շիրմայու ոսկորէ, գուտապերչովի և փայտէ, շչոտկաներ գլխի, շորի, սապոնի, պոլի և կարտի համար. չուլքի թէլ (бумага) մատոկի կօճի և շալէ (гарусъ) ֆելչատկէք մարդկերանց և կանանց, պորտմաններ, քիսաներ, պապիրոսի ամաններ և մանր գոլանտերեյնի ապրանքներ, սապոն ամեն տեսակ 3 կ.,—30 կ., կտոր, հոտավէտ ջրեր, պուդրա, գլիցերին ջրի քացախ, հոտավէտ պարաշոկներ ԿԻԼԵՐԻ ԼԱԲՕՐԱՏՈՐԻՑ. և այլն և այլն և այլն:

Վաճառականներին առանձին պայմաններով և զիջումով վերոյիշեալ ապրանքներ մեծ քանակութեամբ մշտապէս գտնվում են ՄԻՔԱՅԷԼ ՏԷՐ ՆԻԿՈՂՈՍԵԱՆՑԻ պահեստում. (въ складѣ) Միջի փողոցում կաթոլիկաց փողոցի անկիւնում № 13.

Օտարաքաղաքացիք կարող են դիմել հետևեալ հասցէով. Тифлисъ Михаилу Н. Теръ-Никогосову.

111—180

Միջի փողոց, կաթոլիչեսկայա փողոցի անկիւն № 13.

Дозволено цензурою, Тифлисъ, 10 Августа 1882 года. Типогр. Главн. Упр. Главнонач. гражд. час., Лор.-Мелик. ул., д. каз.